

--- Քաղաքաշինական բաց հարթակ ---

Ալեքսանդր Վարդանյան. «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ տնօրեն

## **Շինարարության որակը բարձրացնելու համար՝ պատասխանատվության ճիշտ բաշխում է պետք**

20 տարի աշխատելով շինարարության որակի ապահովման բնագավառում Shincertificate LLC «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ բազմիցս տարբեր մակարդակներում ներկայացրել է շինարարության տեխնիկական աջակցման ոլորտում առկա խնդիրները և դրանց լուծումները, սակայն՝ անարդյունք:

Այժմ կարծում ենք, որ ճիշտ ժամանակն է դրանք վեր հանելու և շահագրգիռ կողմերին հրավիրելու քննարկման:

1. Միջազգային փորձը և մեր պրակտիկան վկայում են, որ շինարարության որակի ապահովման լավագույն արդյունքը ստացվում է պատասխանատվության ճիշտ բաշխման պարագայում՝ երբ տեխնիկական հսկողությունը և շին. նյութերի լաբորատոր փորձարկումներն իրականացվում են համատեղ՝ մեկ անկախ կազմակերպության կողմից: Որպես դրա պրակտիկ կիրառություն առաջարկում ենք առաջնորդվել Փորձարկումների և հսկողության գործակալությունների ԱՄՆ Կալիֆորնիայի Խորհրդի «Շինարարության հատուկ հսկողություն» ուղեցույցով:

2. Շահերի բախումից խուսափելու համար առաջարկում ենք հստակ տարանջատել որակի հսկողության և փորձարկման լաբորատորայի գործառույթները շինարարի գործառույթներից և դրանք դնել պատվիրատուի վրա:

3. Հայաստանում իրականացվող մի շարք ներդրումային շինարարական ծրագրերի տեխնիկական մասնագրերում վկայակոչված են ամերիկյան, բրիտանական, միջազգային շինարարական ոլորտի ստանդարտներ (ASTM, AASHTO, BS, EN), որոնք ներդաշնակեցված չեն ՀՀ-ում գործող ստանդարտների հետ և, համաձայն Ստանդարտացման մասին օրենքի, կարող են ՀՀ-ում կիրառվել

ազգային ստանդարտի կարգավիճակով (ՀՍ ASTM, AASHTO, BS, EN) տեղայնացումից հետո:

Այդ ստանդարտների տեղայնացումը ՀՀ-ում կարևոր է միջազգային համագործակցության տեսակետից, քանի որ՝

- դա կխթանի ներդրումային շինարարական ծրագրերի իրականացումը
- կաջակցի քաղաքակիրթ շինարարության կայացմանը
- կնպաստի ներդաշնակեցված ստանդարտներում տրամադրվող տեղեկատվության և փորձերի արդյունքների փոխհասկացողությանը:

Սրա վառ օրինակներն են Հյուսիս-Հարավ ավտոճանապարհի կառուցման ընթացքում առաջացած խնդիրները, որոնք ծագել են մասնագրերում ամրագրված AASHTO M 85 Ամերիկյան ճանապարհային ինժեներների ասոցիացիայի ցեմենտի ստանդարտի և Հայաստանում գործող ԵՆ համաշինարարական ցեմենտի ստանդարտի սխալ փոխհասկացության պատճառով: Նույն խնդիրը հիմա գոյություն ունի Վեդիի ջրամբարի շինարարության համար:

Խնդիրը լուծելու համար առաջարկում ենք.

- Ստանդարտների տեղայնացման աշխատանքները նպատակահարմար է իրականացնել շինարարության նախապատրաստական փուլում, իսկ ֆինանսավորումը՝ ներդրումային ծրագրերի բյուջեի միջոցներից:
- Ներդրումային ծրագրերի նախագծերի փորձաքննության շրջանակում սահմանել ծրագրերում վկայակոչված ստանդարտների մասնագիտական վերլուծության պահանջը: